ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԻՐԵԼԻՆ

Արդեն գիտեմ, որ Ազգային գրադարանի երկարամյա տնօրեն Դավիթ Սարգսյանին ազատամից հեռացնելուց անմիջապես հետո մշակույթի նախարարը տնօրենի պաշտոնակատար է նշանակել ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի արդեն նախկին տնօրեն Տիգրան Զարգարյանին: Իսկ ինչո՞ւ հատկապես Տիգրան Զարգարյանին, եւ ո՞վ էր շահագրգռված, որ հենց այս մարդը գրաղեցնի երկրի գլխավոր գրադարանի տնօրենի պաշտոնը:

Շատերը գիտեն, որ Տիգրան Զարգարյանը մշտապես համարվել է ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի «մարդը», նրա «ականջները», ում Ռ.Մարտիրոսյանը նշանակել էր Երեւանի պետական համալսարանի գրադարանի տնօրեն, երբ ինքն այդ համալսարանի ռեկտորն էր: Գալով Ակադեմիա՝ Ռ.Մարտիրոսյանն իր հետ այստեղ բերեց նաեւ Տ.Զարգարյանին եւ երկար ժամանակ սկսեց հովանավորել նրան՝ երբեմն անգոր լինելով պարտակել իր հովանավորյալի «մեղքերը»: Եվ հենց այդ «մեղքերը» թաքցնելու, իր ընտրությունից առաջ ակադեմիկոսներին իր դեմ չտրամադրելու համար էր, որ շուտափույթ կերպով ընդհանուր ժողովից ընդամենը մի քանի օր առաջ նրան նշանակել տվեց ԱԳ-ի տնօրեն՝ այսպես մեղմացնելով այն ակադեմիկոսների զայրույթը, որոնք պատրաստվում էին տարեկան ժողովում խոսել նաեւ Զարգարյանի մասին՝ դրանով իսկ հարված հասցնելով Ռադիկ Մարտիրոսյանին: Տիգրան Զարգարյանի գործած արարքների առթիվ ինքը բացատրություն է տվել իրավապահ մարմիններին, ժամանակին մտադրություն է եղել քրեական գործ հարուցել, սակայն դարձյալ Ռադիկ Մարտիրոսյանի նախաձեռնությամբ գործ չի հարուցվել, եւ ամեն ինչ թաղվել է մոռացության քողի տակ:

2008 թվականի հուլիսի 3-ին ԳԱԱ հիմնարար գրադարանը եւ «Սպառողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը կնքել են տարածքի վարձակալության պայմանագիր: Ընդ որում, պայմանագրում արդեն իսկ ակնհայտ է եղել իրավական սխալը. Տ.Զարգարյանը գրել է՝ «...ակադեմիայի հիմնարար գիտական գրադարան... ի դեմս ինստիտուտի տնօրեն Տիգրան Զարգարյանի, որը գործում է ինստիտուտի...»: Թե ինչու է գրադարանը դարձել ինստիտուտ, անհասկանալի է, չնայած արդեն իսկ այս դեպքում պայմանագիրը պիտի համարվեր առ ոչինչ, որովհետեւ այն կնքվել է մի կառույցի անունից, որն իրավաբանորեն գոյություն չունի: Սակայն ժամանակին ոչ ոք ուշադրություն չի դարձրել այս փաստին, մանավանդ որ առկա էր գումարներ վաստակելու խնդիրը: Ժամանակ անց կողմերի միջեւ վեճ է առաջացել, ինչի պատճառը եղել է «Սպառողների ասոցիացիա» հ/կ-ի նախագահի «պահվածքը»: Եվ ահա այդ առթիվ Տ.Զարգարյանը հ/կ-ի տնօրեն Արմեն Պողոսյանին ուղարկել է պաշտոնական գրություն. «Տարրական կանոնները նախատեսում են շենքի տարածքում չծխել, երբ Դուք ծխելով աստիճաններով իջնում էիք՝ չծխելու մեր օրինավոր պահանջին պատասխանեցիք անվայելուչ արտահայտություններով, լկտի լուտանքներով, խուլիգանական պահվածքով՝ ի տես այդ պահին նախասրահում գտնվող մի քանի աշխատակիցների: Ցանկանում են շեշտել, որ սա առաջին դեպքը չէ: Ձեզ գրադարանի տնօրինության եւ աշխատակիցների կողմից դիտողություն է արվել: Ձեր հետագա ներկայությունը տարածքում հղի է Ձեր նոր ավելի անկանխատեսելի սադրանքներով ուստի եւ տարածքը չազատելու դեպքում ստիպված կլինենք դիմել իրավապահ մարմիններին տնօրենի անձի նկատմամբ Ձեր խուլիգանական արարքների պատասխանատվության հայցով»: Մենք պահպանեցինք գրության ոճական եւ քերականական կառուցվածքը՝ ցույց տալու, թե գրագիտության ինչ պաշարով մարդն է ղեկավարելու գլխավոր գրադարանը: Սակայն գրագիտությունն ու մտքերի անհոդաբաշխությունը թողնենք մի կողմ, մանավանդ որ խորանալու դեպքում պիտի բացահայտեինք բացառիկ անգրագիտություն: Չխոսենք նաեւ այն մասին, որ պաշտոնական գրությունների համար նախատեսված բլանկն օգտագործվել է «տարօրինակ» ձեւով՝ այն օգտագործելով անձին վիրավորելու եւ զրպարտությանն օրինական տեսք տալու համար:

Նշենք, որ ցանկացած պայմանագիր լուծարվում է կամավորության սկզբունքով կամ կողմերից որեւէ մեկի՝ պարտավորությունները չկատարելու փաստով, մինչդեռ այս դեպքում Տիգրան Զարգարյանը բացահայտ սպառնալիքներ է տեղացել, վիրավորել անձին, զրպարտել, ինչը բացահայտվել է քննչական բաժնում: «Խուլիգանական պահվածք» արտահայտությունը իրավական եզր է, այն հաստատվում է միայն դատարանի կողմից, մինչդեռ գրադարանի տնօրենն իրեն է վերապահել դատախազության եւ դատարանի գործառույթը՝ այսպես վիրավորանք հասցնելով հ/կ-ի տնօրենին: Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ գրադարանի տարածքը վարձակալության տալով տարբեր կազմակերպությունների՝ գրադարանի տնօրենն այդպես էլ որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել արտաբյուջետային միջոցների նպատակային օգտագործման մասին, ինչին տեղյակ են բազմաթիվ գիտնականներ:

Այժմ Ռադիկ Մարտիրոսյանը, ում խնդրանքով են Տիգրան Զարգարյանին նշանակել Ազգային գրադարանի տնօրեն՝ պաշտոնանկ անելով Դավիթ Սարգսյանին, չի շտապում հիմնարար գրադարանի նոր տնօրեն նշանակել: Նա հավանաբար մտածում է, որ շուտով Տիգրան Զարգարյանին ակադեմիա վերադարձնելու կարիք կլինի, քանի որ նրան երկար չեն հանդուրժի ԱԳ-ում:

ՆԱՐԵԿ ԼԵՎՈՆՅԱՆ